«ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑԻ» ՍԿԶԲՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՓՈՐՁ*

Ս. Տ. ԵՐԵՄՅԱՆ

III [ԵՐՐՈՐԴ ՀԱՏԱԾ ԱՇԽԱՐՀԻՍ]

ԱՍԻԱ[1]

[Ա. Յաղագս Միջերկրեայց]

Առաջին բաժին երկրի բնակութեան մարդկան Ընդհանուր Ասիա[2] է, որ սահմանի ի մտից կուսէ Եւրոպեաւ, իսկ ի հիւսիսոյ, յելից և ի հարաւոյ՝ Անծանօթ երկրաւ և Լիբեաւ։ Բաժանի Ընդհանուր Ասիա ի կողմանս կողմանս[3] և ունի աշխարհս քառասուն և չորս։ Եւ նախ զկողմն Միջերկրեայք[4], որք մտանեն ընդ մէջ Յունաց ծովուն և [ծովուն] Պոնտոսի, վասն որոյ և Միջերկրէ կոչին։

---

* Սկիզբը տե՛ս ՊԲՀ, 1972, № 4։

Գ III Ա 1 Աշխարհք Ընդհանուր Ասիոյ P։ Աշխարհք ընդհանուր ասիացւոց քառասուն և չորս A։

2 «Ընդհանուր Ասիա» է կոչվում Ասիայի մայրցամաքը, ի տարբերություն «Առանձնակ Ասիա» երկրի, որ համապատասխանում է հռոմեական Provinciae Asia-ին։

3 Կողմունս կողմունս A։ և մտանեն ի մի մի աշխարհք կողման S։

4 Միջերկրեայք է կոչվում Փոքր Ասիան Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ՝ Բ, իե, կդ, Գ, ե, Տփղիս, 1913, էջ 12, 197, 261 են։

«Աշխարհացոյցի» (այսուհետև՝ Աշխ.) հեղինակը «Միջերկրեայք» անվան տակ հայտնի քարտեզի նկարագրությունն է տալիս, որ համապատասխանում է Պտղոմեոսի «Ասիայի առաջին քարտեզին» (Asiae tabula prima), սակայն վարչական բաժանումը տալիս է ըստ 284—536 թթ. միջև գոյություն ունեցող բաժանումների, որ տեղի են ունեցել՝ 284, 325, 371 թթ. Դիոկղետիանոս (284—305), Կոստանդին Ա Մեծ (306—337), Վաղես (364—378) և Թեոդոս Ա Մեծ (379-395) կայսրերի ժամանակ և այնուհետև առաջին անգամ փոփոխությունների ենթարկվեցին միայն Հուստինիանոս Ա-ի (527—565) ժամանակ։

Նոր վարչական բաժանումները տեղի ունեցան այն ժամանակաշրջանում, երբ կազմավորվում էր քրիստոնեական եկեղեցին իր թեմերով և հոգևորական հիերարքիայով, սկզբնական շրջանում «տիեզերական եկեղեցու» ձևով, իսկ հետագայում հետզհետե այն պարփակվում է Բյուզանդական կայսրության սահմաններում, մնալով «տիեզերական» անունով։ Նոր վարչական բաժանումները հիմք հանդիսացան եկեղեցու՝ թեմերի՝ մետրապոլիտությունների (արքեպիսկոպոսությունների) և եպիսկոպոսությունների, որոնց ցուցակները կազմվել են Նիկիական (325 թ., հայերեն թարգմանությունը տե՛ս Կանոնք Նիկիական, գրքույկ Ի. «Կանոնագիրք Հայոց», հատ. Ա, Դ, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան. 1964, էջ 114—150), Կոստանդնուպոլսի (381 թ.), Եփեսոսի (431 թ.) տիեզերական ժողովների արձանագրություններին հետևելով։ Մեզ հասել են՝ Լևոն Ա կայսեր (457—474), Հիերոկլեսի (շուրջ 530 թ.) և Գեորգ Կիպրացու (շուրջ 604 թ.) ցուցակները (տե՛ս Georgii Cypri, Descriptio orbis Romani, Lipsiae, 1893, այսուհետև՝ Georg. Cypr.)։ Բացի եկեղեցական թեմերի ցուցակներից Աշխ. հեղինակը իր ձեռքի տակ ունեցել է այնպիսի կարևոր փաստաթուղթ, ինչպիսին է Notitia dignitatum-ը (այսուհետև՝ Not. dign.), որը կազմվել է 413—415 թթ.։ Այստեղ տրված է վաղ բյուզանդական կայսրության վարչական և ռազմական բաժանումը։ Նշանակալից է, որ Աշխ. ցույց են տրված Փոքր Ասիայի վարչական ու եկեղեցական բաժանումները, որոնք գոյություն են ունեցել Դ և Ե դարերում, այսինքն մինչև 451 թ. Քաղկեդոնի ժողովը, երբ հայոց եկեղեցին բաժանվեց «տիեզերական եկեղեցուց» իբրև ինքնուրույն եկեղեցական կազմակերպություն։ Այս փաստերի լույսի տակ բոլորովին պատահական չէ, որ Աշխ. ցույց տրվող վարչական բաժանումը լրիվ

ա. Աշխարհ Ասիոյ Բիւթանիա[1]. յելից կալով Թագաւորական քաղաքին[2] Կոստանդինուպաւլսի, հանդերձ մտիւք ծովագետին Պոնտոսի, որ կոչի Թրակական Փաւսփորոս[3]. մասամբ ինչ Պրոպոնտեայ[4]. առեալ ի մեհենէն Արտեմեայ[5], որ կայ յելսն [ծովագետին] Պոնտոսի, մինչև ցմուտ Ռինդակայ գետոյ[6] և զՈլիմպիոս լեառն ընդ Պռուսա քաղաք[7]։ Եւ ունի [Բիւթանիա] զՈրմինիոն լեառն[8] և գետս զԵլատաս[9] և զԻպպոս[10] և զՀզաւրն Սագառիս[11], և մանունս, որք ի նա անգանին։ [Բիւթանիա] զԱսկանիա լիճ[12] ունի մերձ Նիկիոյ[13] և զԱսկանիդէս [գետ][14]։ Ունի [Բիւթանիա] կղզիս հինգ ի Պոնտոս ծովուն, յորոց երկուքն կոչի Կիանիա[15]. և կղզի մի այլ, որ կոչի զԹինիաս[16]։ Ունի [Բիւթանիա] և մայրաքաղաքս[17] երիս՝ զՆիկիա, զՔաղկեդոն և զՆիկոմի-

---

Համընկնում է 530 թ. մոտերքը կազմված Հիերոկլեսի «Սինեկդեմոսի» տվյալներին (տե՛ս Le Synekdemos d'Hieroclès et l'opuscule géographique de George de Chypre, ed. E. Honigmann, Bruxelles, 1939)։ Վերջինիս հայերեն թարգմանությունը տե՛ս «Նեղոսի Դոքսապատրի կարգադրութիւն պատրիարքական աթոռոցն։ Հայերէն և յունարէն։ Հրատարակեց Ֆրանց Նիկոլաուս Ֆինկ, Վաղարշապատ, 1902։ Վերջինիս հունարեն բնագիրը վերցված է՝ Hieroclis Synecdemus et notitiae graecae episcopatuum, accedunt Nili Doxapatrii notitia patriarchatuum et locorum nomina immutata ex recogn. Gustavi Parthey, Berolini, 1866 (այսուհետև՝ Դոքս.)։

Գ III Ա ա [1] Պտղոմեոսը այս ենթագլուխը վերնագրել է Πόντου καὶ Βιθυνίας θέσις (V, 1, 1)։ Այստեղ և հետո փակագծերում նշված հղումները Պտղոմեոսինն են։

2 PA.

3 Θρακίω Βοσπόρω (V, 1, 1).

4 Προποντίδος (V, 1, 1).

5 Ἱερὸν Ἀρτέμιδος (V, 1, 2).

6 Ռոդանդայ գետոյ Տ։ Ῥυνδακοῦ ποτ. (V, 1, 2).

7 զՈլոնպիոս լեառն Տ։ Προῦσα πρὸς Ὀλύμπῳ τῷ ὄρει (V, 1, 3).

8 զՄելինոն լեառն Տ։ Ὀρμίνιον ὄρος (V, 1, 3), որը մեզ թույլ է տալիս առաջարկելու «Որմինիոն լեառն» ընթերցումը։

9 Ἔλατα ποτ. (V, 1, 3).

10 զՁոպիաս Տ։ Ὕπιου ποτ. (V, 1, 3).

11 Σαγγαρίου ποτ. (V, 1, 3).

12 ἡ Ἀσκανία λίμνη (V, 1, 2).

13 Ուղղում ենք Տ-ի «մերձ Նիկոմիդեայ»։

14 Ἀσκάνιος ποτ. (V, 1, 2) կամ և Ἀσκάνιτος ընթերցումը։

15 Νῆσοι... Κυανέων (V, 1, 3).

16 զՄինաս լիճ Տ։ Θυνιὰς ἡ καὶ Δαφνουσία νῆσος (V, 1, 3)։ Բյութանիային վերաբերող ենթագլուխը սկզբից մինչև այստեղ Տ-ի մոտ հետևյալ կերպ է կարդացվում՝ «Ա. Աշխարհ Ասիոյ Բիւթանիա։ յելից Կոստանդնուպօլսի, հանդերձ մտիւք ծովագետին Պոնտոսի որ կոչի Թրակական Փաւսփորոս, մասամբ ինչ Պրոպոնտեայ. առեալ ի մեհենէն Արտեմեայ, որ կայ յելսն Պոնտոսի մինչև ցմուտ Ռոդանգայ գետոյ, և զՈլոնպիոս լեառն. եւ ունի զՄելինոն լեառն եւ գետս զԵլադաս եւ զՁոպիաս եւ զհզօրն Սագառիս, և մանունս, որք ի նա անգանին. զՄինաս լիճ ունի մերձ Նիկոմիդեայ եւ զԱսկանիդէս. ունի կղզիս հինգ ի Պոնտոս ծովուն, յորոց երկուքն կոչի Կիանիա. ունի եւ լիճ մի այլ Պռամա քաղաք»։

17 Տվյալ կոնտեքստում, ինչպես և այլուր ամբողջ այս ենթագլխում, «մայրաքաղաք» բառը գործածվում է իբրև μητρόπολις բառի հոմանիշ, որ անտիկ աշխարհում նշանակում էր քաղաքների միության կենտրոն՝ «մայր քաղաքաց», իսկ բյուզանդական ժամանակաշրջանում նշանակում էր մետրապոլտության կենտրոն։ Մի քանի թեմերի՝ եպիսկոպոսությունների միության՝ մետրապոլտության կենտրոնական քաղաք, որ սովորաբար միևնույն ժամանակ վարչական և ռազմական իշխանությունների կենտրոն էր, կենտրոն էր նաև հոգևոր իշխանության՝ «մայրաքաղաք»-«մետրոպոլիսում» գտնվում էր մետրապոլտի կամ արքեպիսկոպոսի աթոռը, որին ենթարկվում էին թեմերը։ Յուրաքանչյուր թեմի աթոռը գտնվում էր համապատասխան քաղաքում, որը ենթարկվում էր տվյալ մետրապոլտության «մայրաքաղաքին»։ Իր հերթին յուրաքանչյուր

դիա[18], որք ունին ընդ ինքեանս քաղաքս չորեքտասան, և Եմպոռիոնս[19] քաղումըս, այսինքն [փոքր] քաղաքս ծովեզերեայս և վաճառատեղիս։ Լինի առ եղերս [Ռին]դակայ գետոյ հող սպիտակ առդեղ[20] անուն՝ զոր մանր[21] աղացեալ և ցանեալ ի բանդուկս ի վերայ ցորենոյ՝ և պահի աղնիւ և ձճի[22] չուտէ[23]։ Վեց կայթն կապիճ մի։

Բ. Աշխարհ Միսիա Մեծ և Փոքր, որ կոչի Ելեսպոնտոս[1]. առ երի կայ Բիւթանիոյ։ Ունի Միսիա լերինս երիս[2], գետս չորս[3] և կղզիս երկու[4]։ Եւ [ունի] մայրաքաղաք ծովեզերեայ[5] զԿիզիկոն[6], յորում տաճար, և այլ շինուած մի յեւթն հրաշիցն[7]։

Եւ եռեք են քաղաքք՝ Ի՛լիոն[8], Դառդանոն[9]. Տրովադա[10], զորոց պատերազմէ Դիքտիոն[11] պատմէ և [ա]ռասպելք Հոմերոսի[12]։ Ունի [Ելեսպոնտոս] և այլ քաղաքս երեսուն և ութ[13]։

«մայրաքաղաք» ենթարկվում էր կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսում նստող «տիեզերական պատրիարքին», կամ ինչպես նշված է Դոքս. «... և մայրաքաղաքք, որք հնազանդին Կոստանդինուպալսի» (էջ 29—30)։

18 Բյութանիան բաժանված է եղել նշված երեք քաղաքների մետրապոլտությունների-«մայրաքաղաքների»՝ ζ'. ἡ Νικομήδεια. η' ἡ Νίκαια. θ'. ἡ Χαλκηδών (Georg. Cypr., էջ 57, 65 66)։ Դոքս., թվարկելով ասում է՝ «Ութն՝ Նիկոմիդ[ի]այ ի Բե[ւ]թանիա, ունի եպիսկոպոսս ԺԲ։ Ութն՝ Նիկիայ ի նոյն իշխանութիւն, այսինքն ի Բե[ւ]թանիայ, ունի եպիսկոպոսս Զ։ Ինն՝ Քաղկեդոն ի նոյն իշխանութիւն (այսինքն ի Բեւթանիայ) և ունի սա աթոռս Ժ» (էջ 30)։ Նշված երեք մետրապոլտության մեջ ընդգրկված է եղել քսանութ քաղաք-թեմ, ուստի Աշխ. «քաղաքս չորեքտասանս» կարիք ունի համապատասխան ուղղման։

19 ἐμπόριον.

20 αργιλον.

21 PA. տե՛ս P, էջ 29, ծան. 103։

22 ճիճի A։

23 Հմմտ. Strabo, XII, 8, 11, տե՛ս P, էջ 28, ծան. 102։

Գ III Ա ր. 1 Պտղոմեոսը «Միսիա Մեծը» (Μυσίας Μεγάλης. V, 2, 4) և «Միսիա Փոքր, որ կոչի Ելեսպոնտոս» (Μυσίας Μικρᾶς τῆς ἐφ' Ἑλλησπόντῳ. V, 2, 1) երկրների նկարագրությունը զետեղում է «Առանձնակ Ասիայի» գլխում (Τῆς ιδιως καλουμένης 'Ασίας Θέσις V, 2)։

2 Նկատի ունի՝ Ἴδη ορος... Κιλλαιον ορος..., Τῆμνον ὄρος (V, 2, 10)։

3 Նկատի ունի՝ Αἴσηπος ποτ., Γρηνικος ποτ. Σιμοεντος ποτ.. Σκαμάνδρος ποτ. (V, 2, 2), AP գետս երկու։

4 Նկատի ունի՝ Տենեդոս կղզին (Τένεδος νῆσος. V, 2, 19), որը հիշատակվում է Բ դ (ՊԲՀ, 1972, № 4, էջ 233) իբրև սահմանազատող կետ Եվրոպայի և Ասիայի միջև։ Երկրորդ կղզին Պտղոմեոսի «Ասիայի առաջին քարտեզի վրա» նշված է առանց անվան։

5 AP.

6 Κύζικος 56°—41° 30′ (V, 2, 2). Դոքս. «հինգն՝ կիզիկոն յԵլեսպոնտոս ունի եպիսկոպոսս ԺԲ» (էջ 30)։

7 յորում տաճարն է Աստուծոյ անուանեալ Հրաշից AP, տե՛ս К. П. Патканов, էջ 29, ծան. 105։

8 Ἴλιον 55°20′—41° (V, 2, 12).

9 Δαρδανον 55°15′—41°5′ (V, 2, 2).

10 Ἀλεξάνδρεια Τρωας 55°25′—40°40′ (V, 2, 3).

11 Դիքտիոն Կրետացին գրել է Տրոյական պատերազմի մասին, որի հունարեն բնագրից հասել են միայն հատվածներ, իսկ լատիներեն՝ «Bellum Troianum» բաղկացած 6 գրքից։

12 Հոմերոսը՝ կիսապատմական-կիսառասպելական հեղինակ Տրոյական պատերազմին նվիրված «Իլիական» և «Ոդիսական» էպիկական պոեմների։

13 Քաղաքս քառասուն և մի AP. չհիշատակելով Իլիոնը, Դառդանոնը և Տրովադան կստանանք երեսուն և ութ, ինչպես և ունի S, սակայն քաղաքների այսքան թիվը կասկածելի է, ավելի հավանական է Դոքս. և Georg. Cypr. (էջ 63—64) 12 թեմը-քաղաքը։

գ. Աշխարհ Առանձնակ Ասիա[1], երի կալով Միւսիոյ առ ծովով, յորում մայրաքաղաք[ք] Եփեսոս[2], Զմիւռնիա[3], Պեռգամոն[4], Տռալիս[5], որք ունին ընդ ինքեանս քաղաք քառասուն և ութ[6]։ Եւ ունի Ասիա [Առանձնակ] փոքր աշխարհս չորս՝ զԼիւդիա[7], յորում մայրաքաղաք Սարդէս[8], զԵոլիս[9], զԷոնիա[10], որք են Յոյնք, զԿառիա[11]։ Եւ ունի Ասիա [Առանձնակ] լերինս եւթն[12], գետս եւթն[13], կղզիս տասն[14]՝ զՔիոս համանուն քաղաքաւ[15], և Պոսիդա [քաղաք][16], որ լինի անդ մաղդիկ՝ խիժ ի ծառոց. և զ[Ի]կառոս և զՍամոս համանուն քաղաքաւ[17] և զԿով[18], զոր Ղուկաս ասէ ի Գործսն[19]։ Եփեսոս հարկատու էր Արտեմեայ[20]. անդ է Յոհաննու աւետարանչի գերեզմանն, և միւս Յոհաննու՝ որ կոչեցաւ Մարկոս. և այլք զայլ ոմն Յովհան ասեն[21]։

Գ III Ա գ. 1 ἡ ἰδίως καλουμένη 'Ασία (V, 2).

2 Քաղաքս եւթն և տասն P, քաղաքս հնգետասան A, մայրաքաղաքս Եփեսոս եւ այլ եւս՝ վեց AP։ S-ն, բացի Եփեսոսից (''Εφεσος, 57° 40′—37° 40′, V, 2, 6), հիշատակում է մնացեալ վեց (?) մետրապոլտությունները՝ «մայրաքաղաքք»՝ Զմիւռնիա, Պեռգամոն, Տռալիս, Սարդէս, Քիոս և Սամոս։ Մետրապոլտություններից հիշատակվում են՝ «երկրորդ՝ Եփեսոս Ասիայ ունի եպիսկոպոսս Լ՞Ը» (Դոքս., էջ 30), «վեցն՝ Սարդիկէ (հունարենում՝ Σαρδεῖς) ի Լի[ւ]դիայ ունի եպիսկոպոսս ԻԵ» (Դոքս., էջ 30), «ԽԴ՝ Զմիւռնիա Ասիա[յ] ունի եպիսկոպոսս Դ» (Դոքս., էջ 32)։ Եփեսոսի մետրապոլտության կազմում են եղել Տռալիսի և Պեռգամոնի թեմերը։ Քիոսը և Սամոսը իբրև առանձին թեմեր մտնում էին Հռոդոսի և Կիկլադյան կղզիների մետրապոլտության կազմում (Georg. Cypr., էջ 79), ըստ Դոքս.՝ «ԼԸ՝ Ռոդոն և շուրջ կղզիքն ունի եպիսկոպոսս Ժ[Գ]» (էջ 31)։ Արդյոք սխա՞լ է Աշխ. վեց «մայրաքաղաքները» Առանձնակ Ասիայում, դժվար է ասել։

3 Σμύρνα 57° 40′—38° 35′ (V, 2, 6)։

4 Πέργαμος 57° 25′—39° 45′ (V, 2, 13)։

5 Τραλλεῖς 58° 40′—38° 5′ (V, 2, 15)։

6 Ըստ Դոքս. և Georg. Cypr. Առանձնակ Ասիայի երեք մետրապոլտությունները ունեցել են՝ Եփեսոսը՝ 34, Սարդեսը՝ 25, Զմիւռնիան՝ 4, ընդամենը՝ 63 եպիսկոպոսանիստ քաղաք։ Ըստ երևույթին, բնագրի «որք ունին ընդ ինքեանս քաղաք քառասուն և ութ» պիտի լիներ «... երեսուն և ութ», հաշվելով Եփեսոսի 34 և Զմիւռնիայի 4 թեմերը։ Իսկ եթե Սարդեսի 25 թեմերը ավելացնենք, կստացվի 63 թեմ, որ ճիշտ է (տե՛ս Georg. Cypr., էջ 61, 62, 64—65, 79, 81)։

7 Λυδία (V, 2, 14)։

8 Σαρδεῖς (V, 2, 14)։

9 զԵւողիա AP։ Αἰολίς (V, 2, 5)։

10 'Ιωνια (V, 2, 6), որից առաջացել է հայերեն «Յոյնք» և վրաց. იონნი (არსენი საფარე-ლი, „განყოფისათვს...", ქართული წყაროთმცოდნეობა, IV, Թբիլիսի, 1973, էջ 142)։

11 Καρία (V, 2, 7)։

12 հինգ AS, երկու P։ Յոթը լեռներն են՝ Σίπυλος, Τμῶλος, Μίμας, Μεσωγίς, Μυκάλη, Κάδμος, Φοῖνιξ (V, 2, 10).

13 Հինգ AS։ Յոթը գետերն են՝ Καΐκου ποτ. (V, 2, 4), ''Ερμου ποτ., Πακτωλοῦ ποτ., Καΰστρου ποτ., Μαιάνδρου ποτ., Λύκου ποτ., (V, 2, 6), Καλβιος ποτ. (V, 2, 8).

14 Տասը կղզիներն են՝ Λέσβος, 'Ικαρία, Χίος, Σάμος, 'Αμοργος, Κω, 'Αστυπαλαίας, Σύμη νήσος, Κασος, Καρπαθος (V, 2, 19).

Սրանցից Աշխ. հիշատակում է միայն՝ Քիոս, Իկառոս, Սամոս և Կով կղզիները։

15 Χίος νησος καὶ πολις 56°20′—38°35′ (V, 2, 19).

16 το Ποσειδιον 56°25′—38°25′ (V, 2, 19).

17 Σάμου νήσου η πόλις 57°—37°35′ (V, 2, 19).

18 Կոս S։

19 Գործք առաքելոց, ԻԱ, 1։

20 Նախաքրիստոնեական ժամանակաշրջանում Եփեսոսում էր գտնվում Արտեմիսի (Անահիտի) հռչակավոր տաճարը, որը և համարվում էր Եփեսոսի հովանավորը։ Եփեսոսը Հեսիոդոսի մոտ կոչվում է 'Αρμήνη.

21 Տե՛ս Եւսեբիոս Կեսարացի, Եկեղեցական պատմութիւն (VII, 5)։ AP-«լինի ի նմա մաղտաքէ խիժ ի ծառոց», որ S-ում հիշատակվում է, կապված Քիոս կղզու Պոսիդա քաղաքի հետ։

դ. Աշխարհ Ասիոյ՝ Լիկիա[1], յելից կալով [Առանձնակ] Ասիոյ[2], որոյ մայրաքաղաք է զՄիւռա[3] [և այլ] քաղաքս [երեսուն և] երիս[4]։ Ունի լերինս երկուս[5] և գետս երիս[6], և կղզիս հինգ[7] [որոց] զՌոդոս, հոմանուն պեղագոսին[8]։ Լինի ի Լիկիա[9] խունկ զուկին՝[10] և տրատէ,[11] զոր Հայք արուս կոչեն[12] ի ծառոյ ծորելոյ զխիժ լոյծ,[13] որպէս մեղր կամ որպէս մրուր թանձր։

ե. Բնաշխարհ Ասիոյ՝ Փռիւգիա է[1], յելից կալով Առանձնական Ասիոյ և յերի Լիկիոյ[2]. ունի յինքեան աշխարհս երիս՝[3] [առաջին աշխարհն] զՊիսիդիա՝[4] յորում[5] մայրաքաղաքն Անտիոք[6], և այլ քաղաքս քսան և մեկ[7], յորոց մին

Գ III Ա դ. 1 Λυκία (V, 3). Լուսիա A։

2 AP։

3 Զմիւռնիա SPA։ Ինչպես ճիշտ նշում է К. П. Патканов-ը (էջ 29, ծան. 108) նախապատվությունը պիտի տալ V. Saint-Martin-ի հրատարակած (Mémoires sur l'Armenie, t. I Paris, 1819) Աշխ. բնագրի Միւռա ձևին, որ համապատասխանում է Պտղոմեոսի Μυρα (61°—36° 40′) քաղաքին (V, 3, 3), իսկ Զմիւռնիան արդեն հիշատակեցինք «Առանձնակ Ասիայում»։

4 AP։ Միւռան առանձին մետրապոլտության կենտրոն է եղել և ունեցել է 33 թեմ (ըստ Դոքս. (էջ 30) «Ի՝ Մեւռա Լիկիոյ ունի եպիսկոպոսս ԼԳ։ Տե՛ս և Georg. Cypr., էջ 69—70), ուստի տալիս ենք՝ «որոյ մայրաքաղաք է զՄիւռա [և այլ] քաղաքս [երեսուն և] երիս» ընթերցումը։

5 Նկատի ունի՝ Μασικυτου ὄρους (V, 3, 1) և Κραγος ορος V, 3, 2) լեռները։

6 Նկատի ունի՝ Ξάνθος. Λίμυρος (V, 3, 2) և Καλβιος (V, 2, 11) գետերը։

7 Նկատի ունի՝ Μεγίστη, Δολιχίστη, Χελιδονιαι (V, 3, 6) երկու կղզին և Ῥοδος (V, 2, 19).

8 [Ռոդական Պեղագոս] Ῥοδιακον πελαγος (V, 2, 19). Աշխ. «Աշխարհագիր» մասում 60-րդ միջօրեականի կապակցությամբ հիշատակվում է՝ «Դեդաղա տեղւոյս» (Δαιδαλα τοπος, V, 3, 2), որ կա առ եզերբ ծովուն Լիկիոյ (Λυκιαῖον πελαγος, V, 3, 1)»։ Տե՛ս ՊԲՀ, 1972, № 4. էջ 230։ Պտղոմեոսը Հոռդոս կղզին տեղադրում է «Առանձակ Ասիայի» մասում։ Եկեղեցական տեսակետից ըստ Դոքս.՝ «ԼԸ՝ Ռոդոն և շուրջ կղզիքն ունի եպիսկոպոսս Ժ[?]» (էջ 31), ըստ Georg. Cypr. (էջ 79—80)՝ ΛΙΙ. Τη Ῥοδω των Κυκλαδων νησων իր 13 թեմերով-քաղաքներով։

9 AP։

10 Զուկի կամ Զուկ—«սև խունկ, ստաշխ», որից չոր զուկի՝ «չամչախունկ, զուկի ձեթ՝ «չամչախունկի իւղ», զուկին ծառը, граб" և Ζυγις „serpolet sauvage, վայրի թյում, thymus serpyllum»։ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Բ, էջ 989։

11 Տրատէ—«ծառից հոսող մի տեսակ խեժ կամ խունկ»։ Ըստ К. П. Патканов-ի (տե՛ս էջ 30, ծան. 109), հուն. τρακτη, որ մեկնում է „κακκουμπεαν σενοσον του σοφόρου ἤλεκτρου" Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Զ, էջ 1000։

12 Արուս—«սև խունկ, զուկի, liquidamlbar»։ Հր. Աճառյան, նշվ. աշխ. հատ. Ա, Երևան, 1971, էջ 333։

13 AP։

Գ III Ա ե 1 Φρυγία Μεγαλη (V, 2, 17). Աշխ. տալիս է այն վարչական բաժանումը, որ գոյություն ուներ Դ դարից սկսած։ Փռիւգիան բաղկացած էր երեք վարչական-ռազմական և եկեղեցական միավորներից՝ ըստ Դոքս. (էջ 31). «ԻԾ՝ Անտիոք Պիսիդեայ ունի եպիսկոպոսս ԻԱ», «ԻԲ՝ Լաւոդիկեա Փռիւգիա ունի եպիսկոպոսս Ի[Բ]։, «ԻԳ՝ Փռեւգիայ ի Սալուտառիայ ունի եպիսկոպոսս Ի»։ Ըստ Georg. Cypr. (էջ 71—74) ΚΕ' Τη 'Αντιοχεια της Πισιδίας 21 թեմերով, որի մեջ ընդգրկված էր նաև Աշխ. հիշատակված ο 'Απαμείας της Κιβωτου քաղաքը։ ΚΒ' Τη Λαοδικεια Φρυγίας Πακατιανης 22 թեմերով և ΚΓ' Τη των Συνναδων Φρυγίας Σαλουταριας 20 թեմերով։

2 Լուսիոյ A։

3 Երեք S։

4 Πισιδια, ըստ Պտղոմեոսի (V, 4, 9) Գաղատիայի կազմում։

5 որոյ Λ, որ ունի P։

6 'Αντιόχεια Πισιδιας, 62°30′—39° (V, 4, 19).

7 Քսան և վեց SPA, պիտի լինեն՝ «քսան և մեկ», ոչ թե ԻԶ—26, այլ ԻԱ—21։

[Ապամեա], որ կոչի Կիւոտոս.[8] այսինքն տեղի տապանին Նոյի շինելոյ, եթէ առասպել է, և եթէ ճշմարիտ ոչ գիտեմ[9]։ Եւ երկրորդ աշխարհն[10] է [Փռիւգիա] Պակատիանէ[11], յորում[12] մայրաքաղաք Լաւոդիկէ[13], և այլ քաղաքս քսան և երկու[14]։ Եւ երրորդ աշխարհն[15] է [Փռիւգիա] Սաղուտառիս[16], յորում մայրաքաղաք է Սիւննադա[17]. և այլ քաղաքս քսան[18]։ Եւ ունի Փռիւգիա լեառն զԴի[ն]դիմոն,[19] և գետս հինգ,[20] լիճս երեքտասան[21] և գաշտս մեծամեծս։[22]

[զ. Ոնորիատ[այ][1], ելից կալով Բիւթանիոյ առ երի Փռիւգիոյ մինչև ցՊոնտոսի ծովն։ Ունի Ոնորիա[տայ] մայրաքաղաք զԿղաւդիուպաւլիս, ընդ որով և այլ ևս քաղաքս հինգ[2]։ Եւ գետ ունի զՊարթենիոս[3] երեքվտակեանն[4]. յայսմ աղբեւր երդնուին դևքն վասն անչափ ցրտութեանն][5]։

---

8 Ἀπαμεια Κιβωτος, 61°10′—38°55′ (V, 2, 17).

9 Այս ստուգաբանության հիմքն է հանդիսացել κιβωτός բառը, որ նշանակում է տապան, որտեղից և κιβωτος του Νῶε — Նոյի տապան։

10 P։

11 P։ Պակատիանի—S, A չիք։ Phrygiae Pacatianae։

12 որոյ— P, S չիք։

13 Զաւոդիկէ P, Լաւոդիկիա A։ Λαοδικεια ἐπὶ Λύκω, 59°45′—38°20′ (V, 2, 15).

14 քառասուն SA, վեց P, պիտի լիներ՝ «քսան և երկու», ոչ թե Խ—40, այլ ԻԲ—22։

15 P։

16 Սաղուտառիա P, Մաղատառիա A, Phrygiae Salutaris provinciae։

17 Իդինիա A։ Σύνναδα, 60° 50′—40° 5′ (V, 2, 17), տե՛ս և Strabo, XII, 8, 14։

18 երեսուն SPA, պիտի լիներ՝ «քսան», ոչ թե Լ—30, այլ Ի—20։

19 Դիդոն A, Դիդիմոն P։ Δίνδυμος ὄρος 61°—40°40′ (V, 2, 10).

20 PA։

21 SP, չորեքտասան A։

22 PA։

Գ. III Ա զ 1 S չունի, ուստի տալիս ենք անկյունավոր փակագծերում։ Անվան ճիշտ ընթերցումն է՝ «Աւնորիատայ» կամ «Ոնորիատայ», ինչպես և տրված է S Ոնոռ[ի]ատայ ձևով Պափղագոնիայի նկարագրության մեջ։ A ևս ունի Ոնորիատ ձևը, ինչպես պահպանել է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի № 582 ձեռագիրը (տե՛ս Ա. Աբրահամյան, Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 346, ծան. 1)։ Պտղոմեոսը հասկանալի պատճառներով չի հիշատակում։ Ὀνωριάς, Ὀνωρίαδος-ը Բյութանիայի արևելյան մասն է, որը ստեղծել է իրրև առանձին վարչական միավոր Թեոդոս Ա Մեծ կայսրը (379—395), ինչպես կարծում են ի նշանավորումն իր որդու Հոնորիոսի ծննդյան 384 թվականին (Н. Адонц, Армения в пох у Юстиниана, СПб, 1908, էջ 86)։ Հոնորիոսը առաջին կայսրն էր (395—423 թթ.) նոր կազմավորված Արևմտյան Հռոմեական կայսրության։

2 Ոնորիատայի մայրաքաղաքի և այլ հինգ քաղաքների հիշատակությունը լրիվ համընկնում է մեզ հասած եկեղեցական թեմերի ցուցակներին։ Ըստ Դոքս.՝ «ԺԷ՝ Կլաւդիուպաւլիս ունի եպիսկոպոսս Ե» (էջ 30), ոստ Basilii Notitia՝ և Nova Tactica-յի (Georg. Cypr., էջ 15, 68), ΙΕ′ Ἐπαρχία Ὀνωριάδος ο Κλαυδιοπολεως, α′ ὁ Ἡρακλειας Πόντου, β′ ο Προυσιαδος, γ′ ο Τίου, ο′ ο Κρατείας, ε′ ο Ἀδριανουπόλεως. Այստեղ նշված քաղաքներից Պտղոմեոսը (V, 1, 3) հիշատակում է՝ Κλαυδιοπολις ἡ καὶ Βιθύνιον (59°20′—42°45′), Ἡράκλεια Ποντου (59°—43°30′), Προυσα προς Ὑπιῳ ποταμῳ (58°30′—42°35′), Τίον (60°—43°)։ Բացի Կլավդիուպոլսից, Աշխ. Թրակիայի նկարագրության վերջում հիշատակում է Հերակլիան («Ի Կոստանդնուպաւլսէ քսան մղոն է քաղաքն Երակլեա, յորում կայ թէատրոնն՝ որ մի է յեօթն հրաշիցն», ՊԲՀ, 1972, № 4, էջ 225), և 60-րդ միջօրեականի մասին խոսելիս հիշատակում է Տիոս քաղաքը («...առ Քեռոնիւ, կշիռ Տիոս քաղաքի Ա[ւ]նորիատ աշխարհի...», ՊԲՀ, 1972, № 4, էջ 216)։

3 Παρθένιος ποτ. (V, 1, 3).

4 Երեքարմատեան S։

5 Նույն այս տողը կրկնվում է Երջանիկ Արարիային նվիրված հատվածում (S, էջ 39)՝ «գետս ունի չորս. և աղբիւր մի, յոր աղբեր դիքն երդնուին վասն անչափ ցրտութեան, Ստեղոս անուն»։ Այստեղից կարելի է հետևեցնել, որ Ոնորիատայի հատվածում «դևքն» բառը պիտի ուղղել «դիքն» ձևով։

է. Աշխարհ Պափղագոնիա[1] ելից կալով Ոնոռ[ի]ատայ[2] աշխարհի, առ երի ծովուն Պոնտոսի, որ կոչի Պոնտոս Գաղատական[3]. ունի գետս երկու՝ Զալի[ս]քուս[4] և զԱղիս[5], և մայրաքաղաք[6] զԳերման[իկ]ուպալիս, որոյ բերդն Գանգրայ[7]. ունի և այլ քաղաքս հինգ[8], և բերդս մետասան[9], և դաւառս երեքտասան[10]։

ը. Աշխարհ Ասիոյ՝ Գաղատիա[1] Առաջին, յելից կալով Փռիւգիոյ և առ երի Պափղագոնիոյ, լեառն ունի զՍերկրորդ Դի[ն]դիմոն[2] և գետս զնոյն,[3] որք յառաջ ասացեալ աշխարհս թափին[4]։

թ. Աշխարհ [Ասիոյ] Երկրորդ Գաղատիա[1], յելից կալով[2] Փռիւգիոյ, և առ

Գ III Ա է 1 Παφλαγονία։ Համաձայն հռոմեական վարչական բաժանման, Պտղոմեոսի մոտ Պափղագոնիան մտնում է Գաղատիայի կազմում (V, 4, 4, 5)։ Թեոդոս Ա Մեծի (379—395) ժամանակ Պափղագոնիան բաժանվել է երկու մասի՝ Ոնորիատայի (ընդգրկում էր նաև Բիւթանիայի մասերը) և Պափղագոնիայի համապատասխան մետրապոլիտություններով։ Հուստինիանոս Ա (527—565) նորից վերամիավորեց։ Աշխ., ինչպես այլ դեպքերում, այս դեպքում ևս տալիս է 390-ական թթ. վիճակը։ Թեոդոս Ա-ի ժամանակներից կազմվել է առանձին մետրապոլիտություն՝ ըստ Դոքս.՝ «ԺԵ՝ Գանգրն Պաղփագոնացոց ունի եպիսկոպոսս Գ» (էջ 30)։ Ըստ Georg. Cypr. (էջ 14, 67), ΙΕ' Τῆ Γαγγρᾳ τῆς Παφλαγονίας. α' ὁ Ἰουνοπόλεως. β' ὁ Δαβόρων. γ' ὁ Σωρῶν. Պափլագոնիայում էր նաև ΝΒ' Τῆ Ἀμαστρίδι τοῦ Πόντου, ներկայացված միայն Ամաստրիս քաղաքով, որը Աշխ. չի հիշատակվում։

2 ոնոռատայ S, Ոնորիատէ P, Ոնորիա A։

3 Πόντος Γαλατικός Պտղոմեոսի «Ասիայի առաջին քարտեզում»։

4 Ζαλήγκος ποτ. (V, 4, 2).

5 զՈդիս, զՈզիքոս S։ Ἄλυος ποτ. (V, 4, 2), որ Հալիս գետն է։

6 μητρόπολις, այսինքն՝ մետրապոլիտության կենտրոն։

7 զԳերմանիապալիս A, Գերմանի|կ|ուպոլիս P։ Γερμανικόπολιν τὴν πρὸς Γαγγραν, Γερμανόπολις. 63°—43° (V, 4, 4).

8 A, եւթն P, S չիք։ Նշված հինգ քաղաքներն են՝ Ամաստրիս, Գերմանիկուպալիս կամ Գանգռա, Յունոպալիս, Դադիբրա և Զորոնը։

9 S չիք։

10 S։ և գաւառս վաթսուն և մի PA։

Գ III Ա բ. 1 Պտղոմեոսի ժամանակ (մ. թ. 83—161) գոյություն ուներ մեկ ընդհանուր պրովինցիա Γαλατία (V, 4), որը բաժանվում է երկու մասի Թեոդոս Ա Մեծի (379—395) ժամանակ՝ Գաղատիա Առաջին Անկիւրիա կենտրոնով (Ἄγκυρα μητρόπολις, 62° 40′—42°, V, 4, 6) և Գաղատիա Երկրորդ կամ Գաղատիա Սաղուտարիս Պեսինոս կենտրոնով (Πεσσινοῦς, 61° 10′—41° 30′, V, 4, 5)։ Անաստաս վարդապետի անունով մեզ հասած «Վասն վանորէից Հայոց որ յԵրուսաղէմ» հիշատակվում է՝ «յերկիրն Հոռոմոց Գաղատիա, որ մականուն կոչի Անգուրիա» (Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 227—229)։ Առաջին Գաղատիան առանձին մետրապոլիտություն էր, ըստ Դոքս.՝ «չորրորդն՝ Անկիւրիա ի Գաղատիա ունի եպիսկոպոսս Ղ» (էջ 30), ըստ Nova Tactica-յի Δ' Τῆ Ἀγκύρᾳ τῆς Γαλατίας կամ ըստ Basilii Notitia-յի Δ' Ἐπαρχία Γαλατίας Α' ὁ Ἀγκύρας (Georg. Cypr., էջ 9, 63)։ Ըստ այդմ Առաջին Գաղատիան, բացի Անկյուրիա կենտրոնից, ունեցել է ութ քաղաք։

2 PA Երկրորդ Դի[ն]դիմոն է կոչվում Գաղատիայի մասում շարունակվող Δινούμος, օրոս լեռների արևելյան մասը (τοῦ Δινούμου τὰ ἀνατολικώτερα 62°—41°20′ (V, 4, 3).

3 Նկատի ունի Պափղագոնիայում հիշատակված Զալիսքոս և Աղիս գետերը։

4 Նկատի ունի Գաղատիայից Պափլագոնիայով անցնող ու ծովը թափվող Զալիսքոս ու Աղիս գետերը։

Գ III Ա թ 1 Երկրորդ Գաղատիա կամ Գաղատիա Սաղուտարիս (Galatia Salutaris), գտնվում է Փռիւգիա Սաղուտարիսից արևելք և համապատասխանում է Դ դարի վերջից հայտնի Պեսինունտ քաղաքի մետրապոլիտության։ Ըստ Դոքս՝. «ԺԹ՝ Նպեսենոս (sic!) յերկրորդ Գաղատիա ունի եպիսկոպոսս Զ» (էջ 30)։ Ըստ Bas. Not. ΙΖ' Ἐπαρχία Γαλατίας Β' կամ ըստ Nova Tact. ΙΘ' Τῆ Πεσινούντων τῆς Γαλατίας և պարունակել է յոթ թեմ (Georg. Cypr., էջ 15, 68)։ Ըստ իս Երկրորդ Գաղատիան, բացի Պեսինունտ կենտրոնից ունեցել է այլ յոթ քաղաք։

2 PA։

երի Առաջին Գաղատիոյ մինչև ցՊամփիղիա։ Ունի լերինս[3] և գետս ունի մանունս[4], որք յառաջասացեալ գետս[5] անկանին, և որք ղլիճս[6] առնեն։

[ժ. Պամփիղիա[1] յելից կալով Լիկիոյ[2] առ երի Գաղատիոյ։ Ունի յինքեան աշխարհս փոքունս հինգ,[3] և լեառն մի[4] և գետս չորս,[5] կղզիք երկու[6] և [մայրաքաղաքս Պերգէ և այլ] քաղաքս բազումս[7]։ Լինի ի նմա խունկ՝ ստիւրակ ի Թփոյ փորոյ, ի կերուածէ ճճոյ՝։

ժա. Աշխարհ Սաւրիա՝[1] յելից կալով Պիսիդիոյ Պամփիլիոյ[2], առ երի ծովուն [Կիլիկիոյ][3], հանդէպ Կիպրոս կղզւոյ։ [Սաւրիա] ունի լեառն Տաւրոս՝,

---

3 ΡΛ։

4 Ρ, անուանիս Α։

5 Այսինքն՝ Զալիսքոս և Աղիս (Հալիս) գետերը։

6 Նկատի ունի առաջին հերթին Տատտա լիճը, որ այժմ կոչվում է Տուզ։

Գ III Ա ժ 1 Պանփիլիա Α։ S չունի, բերում ենք ըստ PA, ուստի դնում ենք անկյունավոր փակագծերում։ Այս երկրի նկարագրությունը Աշխ. տալիս է գերազանցապես ըստ Պտղոմեոսի Παμφυλία, V, 5)։

2 Լիսիոյ Α։

3 Հինգ փոքր աշխարհներն են ըստ Պտղոմեոսի՝ 1. Ծովամերձ Պամփիլիա— Παμφυλιας παραλιοι (V, 5, 2), 2. Ապառաժ Կիլիկիա— Κιλικία Τραχεῖα (V, 5, 3), 3. Փռիւղիա Պիսիդիոյ— Φρυγιας μὲν Πισιδιας (V, 5, 4), 4. Կարալիա— Καβαλία (V, 5, 5) և 5. Պիսիդիա— Πισιδια (V, 5, 7)։ Դ դարից սկսած Պամփիլիայի հիշյալ հինգ «աշխարհները» ընդգրկված էին Սիդե և Պերգե քաղաքների մետրապոլտությունների մեջ՝ ըստ Դոքս՝. «Տասն՝ ի Սիդէ Պամփիլա ունի եպիսկոպոսս ԺԶ» (էջ 30), «ԻԶ՝ Պերգոն, որ է մաւտ ի Պամփիլա, ունի եպիսկոպոսս ԺԵ (ԺԷ)» (էջ 31)։ Ըստ Georg Cypr. (էջ 12—13, 22, 66, 74—75)՝ Θ՝ Ἐπαρχία Παμφυλιας. ὁ Σίδης 15 կամ 16 թեմերով, և ΚΔ՝ Ἐπαρχία Παμφυλιας. ὁ Πέργης ἤτοι Σύλαιου 18 կամ 19 թեմերով։

4 Նկատի ունի Լիկիային սահմանակից Μασίκυτον ὄρος լեռնապարը (V, 3, 3)։

5 Նկատի ունի՝ Καταρρακτης ποτ., Κέστρος ποτ., Εὐρυμέδων ποτ. (V, 5, 2) և Μέλας ποτ. (V, 5, 3)։

6 Պտղոմեոսը հիշատակում է Պամփիլիայի երկու կղզիներր՝ Κραμβουσα νῆσος և Ἀττελεβουσα νῆσος (V, 5, 9).

7 Պամփիլիայի քաղաքները հիշատակում է Պտղոմեոսը (V, 5)։ Ըստ եկեղեցական թեմերի Պամփիլիան ունեցել է՝ Սիդեի մետրապոլտության մեջ 16 քաղաք, իսկ Պերգեի՝ 18 կամ 19 քաղաք, ընդամենը 34 կամ 35 քաղաք։

8 Տե՛ս Strabo, XII, 7, 3, որտեղից իմանում ենք, որ այդ խնկի տեսակը ստացվում է Պիսիդիայի բույսերից։

Գ III Ա ժա. 1 Ἰσαυρία—Պտղոմեոսը անդրադառնում է Գալատիային նվիրված գլխում (V, 4, 9), սակայն այն վերաբերում է Իսավրիայի հյուսիսային մասին, որը գտնվում է Կիլիկյան Տավրոսից հյուսիս, իսկ Աշխ. նկատի ունի Իսավրիան իբրև առանձին վարչական և ռազմական միավոր, որի կառավարիչը ըստ Not. Dign. կոչվում էր՝ Comes per Isauriam։ Եկեղեցական տեսակետից Դ դարից հետո Իսավրիան ներկայացնում է Սելևկիա քաղաքի մետրապոլտությունը, որին ենթարկվում էր 23 կամ 24 թեմ. այսինքն եպիսկոպոսանիստ քաղաք. Ըստ Դոքս.՝ «Լ՝ Սելևկիայ Պամփիլայ ունի եպիսկոպոսս ԻԳ» (էջ 31)։ Տե՛ս Georg. Cypr. (էջ 42—43, 76), Ἐπαρχία Ἰσαυρίας Σελευκεια μητροπολις և Nova-Tact. Λ՝ Τῇ Σελευκεια της Παμφυλίας 23 թեմերով։

2 Պիսիդիոյ S, Պամփիղիոյ P, Պանփիւղիոյ A, պետք է լինի՝ Պիսիդիոյ Պամփիլիոյ (այսինքն՝ Պիսիդիայի Պամփիլիայի)։

3 Κιλικιος αὐλων (V, 7, 1), հայերենում պետք է լիներ՝ «Ծովն Կիլիկիոյ»։

4 Ταυρον ὄρος (V, 7, 1) այժմյան Կիլիկյան Տավրոսը։

և գետ զՈւռիմակդիոս[5]*: է ի նմա մայրաքաղաք Սելեւկիա*[6]*, ընդ որով այլ քաղաքք քսան և երեք*[7]*:*

Լինի յաշխարհիս յայսմիկ խունկս սպիտակ, ստիրակուճուս[8]*, սպառդոմտիտ, կաղամիտ, ամենեքեան ի ծառոց ծորելոց, ի կերածէ ճճոյ միոյ՝ որ է դեղին, սև խայտուց ունելով, նման թրթոյ:*

[Եւ զխունկսն ոչ է պարտ միայն ծխել, զի ոչ տայ ազնիւ հոտ այլ խառնեալ ընդ այլ յոյժ անուշ է. և արժէ լիտրն դահեկան մի. բայց զազնիւն ժողովեն օճf և դնեն ի բոյնս, ի կտապս իւրեանց, զոր սպանեալ առնուն, և ծառf ուստի ծորին՝ բարակf են. ստուարն լինի որպէս լուծ, ընդ որ մտեալ ննին ընդ տակն, երթայ ուռելով մինչև ցծայրն՝ գտանէ, և ապա մեռանի, և թափին խունզfն ի խնամոցն Աստուծոյ]:[9]

ժբ. Աշխարհ Լիկայոնիա[1] *է, յելից կալով Գաղատիոյ Երկրորդի*[2]*, առ երի Սաւրիոյ, ունի արձակ դաշտս*[3] *անջուր և մանունս*[4] *լերանց և զնոյն գետս և լիճս*[5]*:*

[*ժգ*[1]. *Կապադովկիա Երկրորդ*[2]*, յելից կալով Գաղատիոյ և առ երի Լի-*

---

[5] 'Ορομάγδου ποτ. *(V, 7, 3): Կան և այլ ընթերցումներ,* 'Ορυμάγδου, 'Αρυμάγδου, *որ կապվում է արիմ* ('Αριμοι) *ցեղանվան հետ, որոնց մի մասը դեռևս մ. թ. սկզբներին ապրում էր Կիլիկիայում Կալիկադնոս լեռան և Սարպեդոն հրվանդանի մոտ* (Strabo, *XIII, 4, 6):*

[6] Σελεύκεια Τραχεῖα. *66° 10′—36° 55′ (V, 7, 5):*

[7] S, *քսան և հինգ* PA: *Կարող էր և «քսան և չորս» լինել: Բնագրում թողնում ենք «քսան և երեք», որ ճշտիվ համապատասխանում է Սելևկիա «մայրաքաղաքի»-մետրապոլտության 23 թեմերին-քաղաքներին:*

[8] *Ստիրակ, կուճում* P:

[9] *Անկյունավոր փակագծերում գտնվող հատվածը պետք է ընդմիջարկում լինի:*

Գ III Ա ժբ. [1] *Լիկոնիա* SP, *Լիկայոնիա* A: *Պտղոմեոսը* Λυκαονία-*ն համարում է Կապադովկիայի 5-րդ ստրատեգիան-պրեֆեկտուրան (V, 6, 15), Դ դարից սկսած կազմում էր առանձին վարչական միավոր-պրովինցիա և եկեղեցական մետրապոլտություն. ըստ Դոքս.՝ «ԻԴ՝ Յեկոնիոն Լիկոնիոյ ունի եպիսկոպոսս ԺԵ» (էջ 31), ըստ* Georg. Cypr. *(էջ 21, 72—73).* 'Επαρχία Λυκαονίας ὁ τοῦ 'Ικονίου *կամ* Τῷ 'Ικονίῳ Λυκαονίας *և ունեը 14 կամ 15 եպիսկոպոսական թեմ՝ քաղաքներ: Լիկայոնիա պրովինցիայի կենտրոնն էր Իկոնիա քաղաքը* ('Ικόνιον, 63°30′—38°45′, V, 6, 15), *որով և պետք փոխարինել ձեռագրերում առաջացած «Լիկոնիա» տարընթերցվածը:*

[2] PA *չիք:*

[3] *Ունելով տարածումն ի դաշտս ընդարձակս* PA:

[4] *փոքունս* P, A *չիք:*

[5] PA:

Գ III Ա ժգ [1] S *չունի, ուստի դնում ենք անկյունավոր փակագծերում:*

[2] *Ըստ Պտղոմեոսի* Καππαδοκία-*ն մեկ միասնական երկիր էր, որը իբրև առանձին թագավորություն դադարեց գոյություն ունենալ մ. թ. 17 թ. և վերածվեց հռոմեական պրովինցիայի: 72 թ., երբ վերացվեց Փոքր Հայքի թագավորությունը, նրա տերիտորիան ևս միացվեց Կապադովկիայի պրովինցիային, պահպանելով, սակայն, իր վարչական ինքնուրույնությունը, ինչպես և տալիս է Պտղոմեոսը Փոքր Հայքը (V, 6, 18): Դիոկղետիանոսից (284—305) սկսած Կապադովկիան իբրև վարչական միավոր, մեծ փոփոխությունների ենթարկվեց: Նախ 297 թ. Դիոկղետիանոսը անջատեց Կապադովկիայից Փոքր Հայքը, կազմելով առանձին պրովինցիա* Armenia Minor *անունով և ավելացնելով նրան նաև Կապադովկիայի մի շարք շրջանները հյուսիսում—Սեբաստիան, Արաբիսոսը, Կոկիսոնը, Կոմանան (Կապադովկիոյ) և Արիարաթիան* (Н. Адонц, *նշվ. աշխ., էջ 74): Այնուհետև Վաղես կայսեր (364—378) օրոք՝ 371 թ., Կապադովկիան բաժանվեց երկու պրովինցիայի՝ Կապադովկիա Առաջին և Կապադովկիա Երկրորդ, իսկ Թեոդոս Ա Մեծի (379—395) ժամանակ՝ 387 թ. Փոքր Հայքի տերիտորիան ևս բաժանվեց երկու պրովինցիայի՝ Առաջին Հայք և Երկրորդ Հայք* (Н. Адонц, *նշվ. աշխ., էջ 88): Կապադովկիայի և Փոքր Հայքի նոր վարչական բաժանումը տևեց մինչև Հուստինիանոս Ա*

կայոնիոյ[3], ունելով մանունս լերինս և գետս, և լայնութիւն տարածեալ ի դաշտս ընդարձակս]։

ժդ. Ելինոպոնտոս[1] յելից կալով Պափղագոնիոյ և առ երի Կապադովկիոյ և ծովու[ն Պոնտոսի]։ Ունի լերինս բազումս մանունըս, և գետս հզօրս՝ զԻռիս[2] և այլ մանունս։

ժե. Աշխարհ Պոնտոս Պոլեմոնական[1], յելից կալով [Ե]լինոպոնտո-

(527—565) 536 նովելլան— հրովարտակը, երբ երկու Կապադովկիաները վերստին միավորվեցին, դառնալով մեկ պրովինցիա (Н. Адонц, նշվ. աշխ., էջ 163)։ Աշխ. Կապադովկիան տալիս է այն վիճակով, որ գոյություն ուներ 371—536 թթ.։ Երկրորդ Կապադովկիան նշված ժամանակաշրջանում բաժանված է եղել երկու մետրապոլտության. ըստ Դոքս.՝ «ժԴ՝ Տիանայ, որ է Երկրորդ Կապադովկիա, ունի եպիսկոպոսս Գ» (էջ 30), «ԻԹ՝ Մոկիսոն Կապադոկեցոց ունի եպիսկոպոսս Դ» (κθ' ἡ Μωκυσὸς τῆς Καππαδοκίας, ἔχουσα ἐπισκοπὰς δ', էջ 31)։ Ըստ Bas. Not. և Nova Tact. ΙΓ' Ἐπαρχία Καππαδοκίας, ὁ Τυάνων ἤτοι Χριστουπόλεως. α' ὁ Κυβιστρῶν, β', ὁ Φαυστινουπόλεως, γ' ὁ Σασίμων: ΚΕ', Ἐπαρχία Καππαδοκίας, ὁ Μωκησσοῦ, α' ὁ Ναζιανζοῦ, β' ὁ Κολωνείας, γ' ὁ Παρνασσοῦ, δ' ὁ Δοαρων (Georg. Cypr., էջ 14, 23, 24, 67, 75—76)։ Ըստ իս Երկրորդ Կապադովկիան ունեցել է՝ երկու մետրապոլտություն-«մայրաքաղաքը»՝ Տիանայ և Մոկիսոն և յոթ թեմ—քաղաք։

3 Լիկոնիոյ P։

Գ III Ա ժդ 1 Լինոպոնտոս PA, Ելիոն-պոնտոս S։ S (էջ 24) հիշատակվում է երկու տեղում սխալաշատ և աղավաղված. «ժԱ. Ելիոն-պոնտոս յելից նոյն Պոնտոսի, եւ յելից Պափլագոնիայ առ երի Երկրորդ Գաղատիոյ», «ժԳ. Աշխարհ Ելիոն-պոնտոսի առ երի Լիկայոնիոյ»։ Սույն երկու հատվածները աղավաղումն են ներկայացնում ժգ. Կապադովկիա Երկրորդ և ժդ. Ելինոպոնտոս երկրամասերի նկարագրության։ Ըստ Laterculus Polemii Silvii (գրվել է 448 թ., ըստ Մոմմսենի այն կազմվել է ոչ ուշ, քան 386 թ.) այս երկիրը կոչվել է Pontus Amasia, որ ըստ Laterculus Veronensis-ի (կազմվել է 297 թ.) Diospontus պրովինցիան է։ Կոստանդին Ա Մեծը (306—337) իր մոր՝ Հեղինէ թագուհու պատվին վերանվանում է Helenopontus։ Հետագայում Հուստինիանոս Ա (527—565) միավորում է Pontus Polemoniacus-ը Helenopontus-ի հետ, ստեղծելով մեկ պրովինցիա, թողնելով Helenopontus անունը (Н. Адонц, նշվ. աշխ., էջ 163)։ Աշխ. տրվում է հին բաժանումը երկու մասի, որ գոյություն ուներ մինչև 451 թ.։ Եկեղեցական բաժանման տեսակետից Ելինոպոնտոսը համապատասխանում է՝ ըստ Դոքս.՝ «ԺԻ՝ Ամասիա յԵղեսպոնտոն (պիտի լինէր՝ յԵղեն[ո]պոնտոն) ունի եպիսկոպոսս Է, յորում եպիսկոպոս է Բերի[ս]ա» (էջ 30)։ Ըստ Nova Takt. Ելինոպոնտոսը համապատասխանում է՝ Τῇ Ἀμασείᾳ Ἑλενοπόντου իր հինգ եպիսկոպոսական աթոռներով α' ὁ Ἀμισοῦ, β' ὁ Σινώπης, γ' ὁ Ἰβόρων, δ' ὁ Ἀνδράπων, ε' ὁ Ζαλίου ἤτοι Πομπηιουπόλεως (Georg. Cypr., էջ 67)։ Ելինոպոնտոսի կազմում էր նաև Եվխայտա քաղաքի թեմը՝ Τοῖς Εὐχαΐταις Ἑλενοπόντου, θρόνος ὑποκείμενος οὐκ ἔστι (Nova Tact., Georg. Cypr., էջ 83)։ Պտղոմեոսի մոտ Ելինոպոնտոսը համապատասխանում է Գաղատական Պոնտոսին (Πόντος Γαλατικός, V, 6, 8) և սահմանակից էր Գաղատիայի լեվկոսյուռների (Λευκοσύρων, V, 6, 2) աշխարհին։

2 զԻւռինս A։ Ἴριος — Iris (V, 6, 2).

Գ III Ա ժե. 1 S, Պողիմոնական P, Պոլեմենական A։ Պտղոմեոսը ունի Πόντος Πολεμωνιακός (V, 6, 4)։ Pontus Polemoniacus-ը կազմում էր առանձին եկեղեցական միավոր, մետրապոլտություն. ըստ Դոքս՝. «ԺԸ՝ Նիոյկիսար[ի]ա Պոնդացոց ունի եպիսկոպոսս Գ» (ιη' ἡ Νεοκαισάρεια Πόντου Πολεμονιακοῦ, ἔχουσα ἐπισκοπὰς η', էջ 30)։ Ըստ Bas. Not. ΙΖ' Ἐπαρχία Πολεμωνιακῆ. ὁ Νεοκαισαρείας կամ ըստ Nova Tact. ΙΗ' Τῇ <Νεο>καισαρείᾳ Πόντου, որին ենթարկվում էր 3 կամ 4 թեմ. α' ὁ Κερασούντων, β' ὁ τοῦ Πολεμωνίου, γ' ὁ Κομάνων և Bas. Not.-ում առաջին տեղը հիշատակվող α' ὁ Τραπεζοῦντων (Georg. Cypr., էջ 15, 68)։ Ըստ երևույթին, երբ 536 թ. Հուստինիանոս Ա վերամիավորեց Ելենոպոնտոսը Պոլեմոնական Պոնտոսի հետ, Տրապիզոնի թեմը միավորվում է Լազիկեի մետրապոլտության կազմում՝ Τῇ Τραπεζοῦντι τῆς Λ<αζικῆς>(Georg. Cypr., էջ. 69—70)։ Ըստ Դոքս՝. «ԼԳ՝ Տրապիզոն Լազիկիայ ունի եպիսկոպոսս Է» (էջ 31)։

սի[2] և յերի Պոնտոս ծովուն։ Ունի լերինս փոքունս դժուարավայրս, և գետս զԹերմոդոն[3] և այլ մանունս։

ժզ. Աշխարհ Առաջին Կապադովկիա[1], ելից կալով Երկրորդ Կապադովկիոյ, որ և նա աշխարհահամարն[2] է, և առ երի Պողեմոնական Պոնտոսի։ Ունի լեառն զԱնտիտաւռոս[3] և զայլ փոքունս, և գետս Մելաս[4] և զԱլիս[5], և զայլս մանունս, որք ի նա խառնին։

ժէ. Աշխարհ Առաջին և երկրորդ Կիլիկեայք[1] են, յելից կալով Լիկ[այ]ոնիոյ և Սաւռեայ, յերի Առաջին և Երկրորդ Կապադովկիոյ[2], յեզր ծովուն

---

2 Ելիոն-պոնտոսի S, Լինոպոնտոսի P, Պոնտոսի A։

3 S չիք, զԹեոմոնտոն A։ Θερμωδοντος ποτ. (V, 6, 4):

Գ III Ա ժզ. 1 Այսպես էր կոչվում Կապադովկիայի կենտրոնական մասը 371—536 թթ. վարչական բաժանման համաձայն (տե՛ս Գ III Ա ժգ, ծան. 1)։ Առաջին Կապադովկիան կազմում է առանձին մետրապոլտություն, որին մինչև Պապ թագավորը (368—374) ենթարկվում էր եկեղեցական տեսակետից Մեծ Հայքի թագավորությունը։ Հայաստանի եպիսկոպոսապետ-կաթողիկոսները իրենց ձեռնադրությունը ստանում էին Կեսարիայի արքեպիսկոպոսից։ Ըստ Դոքս.՝ «Նախ և առաջին Կեսարիայ Կապադովկեցոց ունի եպիսկոպոսս ԺԵ (α' τῆ Καισαρεια της Καππαδοκιας, ἔχουσα ἐπισκοπας τη') (էջ 30)։ Ըստ Հիերոկլեսի «Սինեկդեմոսի» Καππαδοκια Α չորս քաղաքներով. Καισαρεια. Νύσσα. Θερμαί (Βασιλικων Θερμων), ρεγεων Ποντος (Hirocles էջ 12) և կազմում էր առանձին մետրապոլտություն՝ Ἐπαρχία Καππαδοκιας ο Καισαρείας հինգ թեմերով, որոնց կենտրոններն էին հիշյալ քաղաքները, ավելացնելով նաև Λιπολις և Κισκή քաղաքները (Georg. Cypr. էջ 6, 61)։

2 Աշխարհահամար բառը հատուկ տերմին է և համապատասխանում է իրանական «շահրըմար» բառին։ Հայ մատենագրության մեջ այն գործ է ածվում Սեբեոսի մոտ՝ «Յայնժամ...ապըստամբեալ ի բաց ելեալ ի Հայոց անուանեալ Վահան իշխան աշխարհին Սիւնեաց, և խընդրեաց ի Խոսրովայ յարքայէն Պարսից, զի տարցեն զդիւան աշխարհին Սիւնեաց ի Դըւնայ ի Փայտակարան քաղաք, և կարգեսցէ զքաղաքն ի շահրմար Ատրպատականի, զի մի ևս կոչեսցի անուն Հայոց ի վերայ նոցա» («Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն», գլ. Զ, Երևան, 1939, էջ 27)։ «Աշխարհահամարը» կապվում է համապետական աշխարհագրի—կադաստրի հետ, երբ յուրաքանչյուր վարչական միավոր ենթարկվում էր մանրամասն վիճակագրության համապատասխան հարկերը ճիշտ գանձելու համար։

3 Ἀντίταυρος ὄρος (V, 6, 7).

4 Տվյալ դեպքում այն Մելասն է (Μελας. V, 6, 7), որը Կեսարիայից հյուսիս անցնելով թափվում է Հալիս գետը։ Պտղոմեոսի ժամանակ ենթադրվում էր, որ այս Մելասը շարունակությունն է Մելիտենեի Մելասի (այժմ՝ Թոխմա-սու), որը թափվում է Եփրատ գետը։

5 Աղիս A։

Գ III Ա ժէ. Հռոմեական կայսրության կազմում Κιλικια-ն (հայերեն՝ Կիլղիկէ, Կիլիկիա, Կիլիկիա) մեկ վարչական միավոր է, որպես և ծանոթ է Պտղոմեոսը (V, 7)։ Կիլիկիա պրովինցիան բաժանվեց երեք պրովինցիաների Կոստանդին Ա Մեծի (306—337) ժամանակ՝ 1. Իսաւրիա կամ Սաւրիա (տե՛ս Գ III Ա ժա) Սելեւկիա կենտրոնով, 2. Կիլիկիա Առաջին Տարսոն կենտրոնով և 3. Կիլիկիա Երկրորդ Անազարբա կենտրոնով (տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 41)։ Եկեղեցական տեսակետից Առաջին Կիլիկիան կազմում էր Ἐπαρχία Κιλικιας Α. Ταρσος μητροπολις, որին ենթարկվում էր 7 թեմ՝ Πομπηιούπολις, Σεβαστη, Κώρυκος, Ἄσανα, Αὐγουστοπολις, Μαλλος, Ζεφύριον (Georg. Cypr., էջ 41) կամ ինչպես Դոքս.՝ «զՏարսոն, որ ունի եպիսկոպոսս առանձին ԺԳ (?)» (էջ 6)։ Երկրորդ Կիլիկիան կազմում էր՝ Ἐπαρχία Κιλικίας Β. Ἀναζαρβος μητροπολις, որին ենթարկվում էր 8 թեմ՝ Μοψουεστια. Αἰγεια, Ἐπιφανεια. Εἰρηνοὐπολις. Φλαβιας Ἀλεξάνδρεια, Κάβισσος, Κασταβαλα, Ῥόσσος (Georg. Cypr. էջ 42)։ Ըստ Դոքս.՝ «յԱնարզարայ, որ ունի եպ. Թ» (էջ 6)։

1 A—ութեւտասներորդ՝ Կիլիկիա, յերի Առաջին եւ Երկրորդ Կապադովկիոյ, յելից կալով Լիկոնիոյ եւ Իսաւրիոյ։ P—ԺԷ. Կիլիկիա ըստ ինքեան՝ Առաջին և երկրորդ՝ յելից կալով Լիկոնիոյ և Սաւրիոյ։

2 A, Կապադոկացոց S. Կապադովկիոյ Առաջնոյ P։

իւրեանց և Սիսիկեան ծոցոյն։ Լեառն ունի զՏաւրոս և գետս վեց՝ զՈւռիմակ-գոս,[3] զԿալի[լկադն]ոս,[4] զԼամոս,[5] զԿիւդնոս,[6] զՍառոս,[7] զՊի[ւ]ռամոս։[8] Որոց (Առաջին և Երկրորդ Կիլիկիոյ) մայրաքաղաքք են՝ Տարսոն, և Անարզաբա և այլ քաղաքս բազումս։ Ընդ որովք աշխարհք բազումք և բերդք, և երկու դրունք ելանելոյ յԱսորիս՝ Մալիս և Պլատանա։ Եւ է [Կիլիկիայ] ամենաբեր հանգոյն երկրին Յորդանանու։

Ժը. Աշխարհ Կիպրոս կղզի[1] յելից կալով Պամփիլիական պեղադոսին[2], առ երի Սաւրիոյ և Կիլիկիոյ, մինչև ցՓիւնիկական պեղագոսն[3]։ Ունի լեառն զՈլիմպոս[4], և այլ ևս երիս և գետս չորս[5]։ Լինի անդ լատան՝ ի ցողոյ անկեալ զխոտով խռուի, ի Թափեալ վար[ս]ոցս[6] և ի մօրուս քօշից... ժողովեն ի խունկ։ Եւ ունի Կիպրոս զսահմանս իւր երեք մասն երկայն և ի լայնն մասն մի[7]։

ԺԹ. Աշխարհ Երկրորդ Հայք, որ արդ կոչին Երրորդ Հայք[1], յելից կալով

---

3 զԱռիմակդիս S, զՈւռիմակդիս P, A չիք։

4 զԿալիգոս S, զԿալիդոս P, A չիք։

5 զԴամոս S, A չիք։

6 զԿիւնդնոս S, A չիք։

7 Զաւռոս S, A չիք։

8 զՊիռամոս SP, A չիք։

Գ III Ա ժը. 1 Կիպրոս կղզին (ἡ Κύπρος νῆσος. V, 13) Պտղոմեոսը ցույց է տալիս Սիրիայի (Ասորիքի) քարտեզի վրա՝ «Ասիայի չորրորդ քարտեզի» (Asiae tabula quarta) վրա։ Աշխ., ղեկավարվելով եկեղեցական բաժանման սկզբունքով, Կիպրոս կղզին տալիս է «Միջերկրեայքի» մասում, այսինքն՝ «Ասիայի առաջին քարտեզի վրա»։ Եկեղեցական տեսակետից, ինչպես նշում է Դոքս՝ «Կիպրոս ինքնագլուխ է (ἡ γὰρ Κύπρος αὐτοκέφαλος. էջ 29), «եւ եպիսկոպոսս ունի նախապատուեալն ի նմա մայրաքաղաքն Կոստանդիա...» (էջ 10)։ Ըստ Georg. Cypr. (էջ 56), Կիպրոսը հանդիսանում էր առանձին մետրապոլտություն՝ Ἐπαρχία τῆς Κύπρου Կոստանդիա կենտրոնով (Κωνσταντία μητροπολις), որին ենթարկվում էր կղզու 12 թեմը-քաղաքը։

2. Παμφυλιων πέλαγος (V, 13, 1):

3. Պտղոմեոսը՝ ունի Συριακον πελαγος (V, 13, 2): Աշխ. հեղինակը իր ձեռքի տակ ունեցել է այնպիսի քարտեզ, որտեղ նշված է եղել՝ Φοινικης πελάγος։

4 զՈլիմբոս S, զՈղիմպոս P, զՈվզիմպոս A: Ὄλυμπος ορος (V, 13, 5)։

5 Նկատի ունի՝ Λυκος, Τετιος, Πεδιαῖος և Λαπηθος գետերը (V, 13, 2, 3, 4)։

6 Ի Թափիչ՝ վարոցս ուղղում ենք՝ ի Թափեալ վար[ս]ոցս, տե՛ս Plin, XII, 17 (37). К. П. Патканов, էջ 33, ծան. 1։

7 Նկատի ունի՝ երկայնության 64°—67° և լայնության 35°—36°։ Ըստ P՝ Կիպրոս «ունի սահմանս երկայնն չորս հարիւր երեսուն մղոն, և ի լայնն՝ մասն մի»։

Գ III Ա, ԺԹ. 1 Աշխ. տեքստից ակնհայտ է, որ նրա հեղինակը ծանոթ է Փոքր Հայքի իր ժամանակի վարչական բաժանման հետ, սակայն հետապնդելով որոշ նպատակ՝ ցույց տալ Մեծ Հայքի տերիտորիան նրա ամբողջական վիճակում, այսինքն՝ մինչև նրա տրոհումը և բաժանումը 387 թ. — տալիս է Փոքր Հայքի նախահուստինիանոսյան վիճակը։ Փոքր Հայքը մ. թ. ա. 321 թ. իրեն հայտարարեց անկախ և նվաճեց շրջակա երկրամասերը, հասնելով մինչև Սև ծովի ափերը, որտեղ ըստ Ստրաբոնի (XII, 3, 28), նրա նավահանգիստներն էին՝ Տրապիզոնը և Փառնակիան, նրան ենթարկվում էին՝ Խաղտիք (խալիբները) և տիբարենները։ Պոնտոսի թագավորության հզորացումից հետո Միհրդատ Զ Եվպատորի (111—63) ժամանակ, մ. թ. ա. 112 թ. նվաճվեց վերջինիս կողմից, սակայն Պոնտոսի անկումից հետո (մ. թ. ա. 65 թ.) Փոքր Հայքի թագավորությունը մտնում է Հռոմեական պետության կազմում իբրև կախյալ երկիր։ Մ. թ. 72 թ. Փոքր Հայքի թագավորությունը վերանում է և միացվում է պրովինցիա Կապադովկիային։ Այս վիճակում է ճանաչում Պտղոմեոսը (V, 6, 18) Ἀρμενία Μικρα երկիրը, որ բաղկացած է եղել հինգ գավառներից, Ὀρβαλισηνή (Գայլ-գետի վերին հոսանքի շրջան, ըստ Նեոկեսարիայից դեպի արևելք), Λιτουλανη (Հալիս գետի ակունքների շրջանը), Αἰρετικη (Եփրատ գետից և Զիմարայից մինչև Հալիս գետը ձգվող լեռնային շրջանը),

Կիլիկիոյ առ Տաւրոս լերամբ յերի Ամանոս լերին, որ բաժանէ ընդ նա և ընդ Կոմագենի Ասորւոց մինչև ցԵփրատ։ Ունի և այլ լերինս[2]. Զիգոն Բասիլիկոն[3] և զՈրոմանդոն, և գետ[4] զնոյն [անուն Որոմանդոն[5] և] զՊի[ւ]ռամիս և զՊառատիս[6] և [զՄելաս],[7] զԿիակկաս և զԿառոմոսոս,[8] և դրունս երկու ելանելոյ յԱսորւոց[9]։

Ὀρεστηνή (Տիվրիկեից մինչև Հալիս գետը, Սեբաստիայի դիմաց ձգվող երկրամասը) և Ὀρβιστηνή (Տիվրիկեից դեպի հարավ, մինչև Դասկուսա և Արածանիի գետախառնուրդը Եփրատ գետում։ Այժմ այս տարածության մեջ հիմնական բնակավայրն է Արաբկիրը)։ Փոքր Հայքի տերիտորիան մեծ փոփոխությունների ենթարկվեց Դիոկղետիանոսի (284—305) ժամանակներից սկսած։ Վերջինս անջատեց Փոքր Հայքը Կապադովկիայից, հանելով վերջինից մի շարք հյուսիսային գավառներ՝ միացնելով առաջինին։ Ստեղծվեց Armenia Minor առանձին պրովինցիա։ Այնուհետև Թեոդոս Ա Մեծը (379—395) Փոքր Հայքի տերիտորիան բաժանեց երկու մասի՝ Առաջին Հայք (Armenia Prima) և Երկրորդ Հայք (Armenia Secunda)։ Այդ պիտի տեղի ունենար ոչ թե մինչև 386 թ., ինչպես կարծում է Ն. Ադոնցը (նշվ. աշխ., էջ 89), այլ 387 թ. Մեծ Հայքի թագավորության բաժանումից հետո։ Այդ ժամանակ նախկին Մեծ Հայքի թագավորության կազմից անջատվեցին և կայսրությանը կցվեցին երկու նահանգներ՝ Ծոփաց աշխարհը («Հինգ սատրապությունների» երկիրը) և Բարձր Հայքը (հռոմեացիները կոչում էին «Ներքին Հայք» Armenia Interior կամ պարզապես՝ Armenia Maior)։ Այդ վիճակը պահպանվեց մինչև Հուստինիանոս Ա (527—565)։ Վերջինս արմատական փոփոխություններ մտցրեց պրովինցիալ բաժանման մեջ։ 536 թ. նովելլայով կազմակերպվում էր չորս հայկական պրովինցիա, որով և խախտվում էր Մեծ Հայքի տերիտորիայի վիճակը, բայց վերականգնվում էին նախկին Փոքր Հայքի թագավորության սահմանները, որ գոյություն ունեին իրենց ամենաընդարձակ վիճակում (մինչև մ. թ. ա. 112 թ.)։ Այժմ այդ տերիտորիան կոչվեց Առաջին Հայք (Armenia Prima)։ Աշխ. հեղինակը չուզենալով խախտել Մեծ Հայքի տերիտորիալ ամբողջականությունը, Փոքր Հայքը տալիս է այն տերիտորիալ առումով, որ գոյություն ուներ Թեոդոս Ա Մեծից մինչև Հուստինիանոս Ա (387—536 թթ.), բայց չի մոռանում պարզաբանել՝ «Առաջին Հայք, որ արդ կոչին Երկրորդ Հայք», և «Երկրորդ Հայք, որ արդ կոչին Երրորդ Հայք»։ Իսկ Հռոմեական (ավելի ճիշտ Բյուզանդական) կայսրության մասը կազմող Բարձր Հայքը կամ Ներքին Հայքը և Ծոփքը Աշխ. նկարագրում է Մեծ Հայքին նվիրված գլխում, իբրև նրա բաղկացուցիչ անքակտելի մասը։ Հիերոկլեսի «Սինեկդեմոսի» համաձայն Երկրորդ Հայքը համապատասխանում էր՝ Ἀρμενία Β իր վեց քաղաքներով՝ Μελιτηνή. Ἄρκα. Ἀραβισσός. Κουκουσός. Κόμανα. Ἀριαράθεια։ Ըստ Գորգ.՝ «Ժ-ր՝ Մելետենի Հայոց ունի եպիսկոպոսս Ե, ուստի և Նորին եպիսկոպոս է Կոկիսոն, ուր աքսորեցաւ ոսկի լեզուն Յոհաննէս» (ιγ' ἡ Μελιτηνὴ τῆς Ἀρμενίας, ἔχουσα ἐπισκόπους δ' ἐξ ὧν ἐστι καὶ ἡ ἐπισκοπὴ Κουκουσός. ἐν ᾗ ἐξωρίσθη ὁ χρυσοῦς τὴν γλῶτταν Ἰωάννης. (էջ 30)։ Ըստ իս՝ Երկրորդ Հայքի վարչական բաժանման համապատասխան գոյություն ուներ եկեղեցական բաժանում՝ Ἐπαρχία Ἀρμενίας. ὁ Μελιτινῆς, ὁ Ἄρκης, ὁ Κουκουσοῦ ὁ Ἀραβισσοῦ. ὁ Ἀριαράθης. ὁ Κομανῶν (Bas. Not., Georg. Cypr., էջ 14)։ Երկրորդ Հայքի վարչական կենտրոնն էր Մելիտինէ (այժմ Մալաթիա) քաղաքը, որտեղ տեղադրված էր Secunda Armeniaca լեգեոնը (ըստ Not. dign. տե՛ս Н. Адонц, նշվ. աշխ., էջ 14)։ Հայկական պրովինցիաները վարչականորեն մտնում էին Պոնտական դիոկեզում (Ponticae dioceseos), որը գլխավորում էր vicarii praefectorum-ը։ Նրան էին ենթարկվում Առաջին Հայքի և Երկրորդ Հայքի կառավարիչները՝ presides (Н. Адонц, նշվ. աշխ., էջ 91—94)։

2 PA։ Լերինս երիս, պիտի լինի՝ «չորս»։

3 Ζυγὸν Βασιλείου ὄρος. այսինքն՝ «արքայական գիծ»—Անտիտավրոս լեռնաշղթայի արևելյան ճյուղավորությունը, որը Արաբկիրից հարավ հասնում է մինչև Եփրատ գետը և վերջանում Արածանիի գետաբերանի դիմաց։ Տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1963, էջ 52։

4 Բ գետս չորս։ Λ գետս երիս։

5 Այժմ Հյուրման-դերեսի գետ։

6 Παράδεισος ποτ., տե՛ս Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 77։

7 Այժմ Թոխմա-սու գետ։

8 Այժմ Կյուրումգե գետակ, տե՛ս Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 58։

9 Այս երկու լեռնանցքները՝ «դրունք» Պյուրամոս գետի կիրճում, բյուզանդական Κύλινορος

ի. [Աշխարհ Առաջին Հայք՝ որ արդ կոչին]¹ Երկրորդ Հայք, որ կայ յելից Կապադովկիոյ, և երկայն տարածի մինչև յԵփրատ, և լեառն ունի զԱրգէոս։ Եւ ունի Ալիս գետ և այլ գետս երկուս՝ [Իրիս և Գայլ-գետ], և լերինս բազումս և մեծամեծս։

[իա. Աշխարհ Պոնտոս Կապադովկիոյ՝¹ յելից կալով Պողեմոնական Պոն-

---

և "Αραβα վայրերում (E r n s t. H o n i g m a n n, Die Ostgrenze des Byzantinischen Reiches von 363 in 1071, Bruxelles, 1935, էջ 85—87)։

Գ III Ա ի. 1 Ինչպես նշվեց, Աշխ. սկզբնական բնագրում հայտնի պատճառներով «Առաջին Հայքը» Հուստինիանոսի 563 թ. նովելլայի առումով գոյություն չունի, հանգամանք, որ հետագա արտագրողների մոտ առաջացրել է խառնաշփոթություն։ 536 թ. հետո նախկին «Առաջին Հայքը» կոչվում էր «Երկրորդ Հայք», ինչպես Հուստինիանոսը հայտնում է իր հրովարտակում՝ «Մենք կազմակերպեցինք «Երկրորդ Հայքը, որ նախապես Առաջին [Հայք] էր կոչվում՝ Սեբաստիա կենտրոնով» (§ 1. Δευτέραν δὲ ἐτάξαμεν Ἀρμενίαν τὴν ἔμπροσθεν πρώτην καλουμένην, ἧς ἡγεῖται Σεβάστεια πόλις, Н. А д о н ц, նշվ. աշխ., էջ 166)։ Համաձայն սրա Աշխ. ունի՝ «[Աշխարհ Առաջին Հայք՝ որ արդ կոչին] Երկրորդ Հայք»։ Այնուհետև 536 թ. նովելլայում ասվում է՝ «§ 2. Այնուհետև կազմեցինք Երրորդ Հայքը, որ նախկինում Երկրորդ [Հայք] էր կոչվում, կենտրոնը հին երևելի Մելիտինե քաղաքն է (§ 2. Ἐπὶ τούτοις τε τρίτην Ἀρμενίαν κατεστήσαμεθα τὴν πρότερον δευτέραν, ἧς ἡγεῖται Μελιτηνὴ πόλις ἀρχαία, Н. А д о н ц, նշվ. աշխ., էջ 167։ Հայերեն թարգմ.՝ Հրաչ Բարթիկյանի, «Պրոկոպիոս Կեսարացի», Երևան, 1967, էջ 303, 304)։ Ինչպես տեսանք (Գ III Ա ժբ), այս խոսքերին լրիվ համաձայնվում է Աշխ. «Երկրորդ Հայք, որ արդ կոչին Երրորդ Հայք»։ Սակայն Աշխ. հեղինակը, կամ ավելի ճիշտ հետագա ընդօրինակողները, այս Առաջին Հայքը շփոթել են Մովսես Խորենացու (Ա, ժդ) Առաջին Հայքի հետ, որով և բացատրվում է «և լեառն ունի Արգէոս», որ չէր կարող գտնվել Թեոդոս Ա-ի կողմից կազմակերպված Առաջին Հայքի տերիտորիայում։ Մովսես Խորենացուն հայտնի «Պռոտին Առմենիան» (Πρώτη Ἀρμενία), ինչպես ինքը հաղորդում է, տեղադրվում է՝ «ի տեղի մի, որ այժմ ասի Կեսարիա», այսինքն, ըստ նրա ժամանակվա վարչական բաժանման, Առաջին Կապադովկիայում։ Խորենացին բերում է «Արմենիա» անվան ավանդական էպոնիմ Արամ նահապետի գործունեության մասին պահպանված զրույցները, որ կապվում են Կեսարիայի և Արգեոս լեռան հետ, որ հայ ժողովրդի կազմավորման սկզբնական օրրանը պիտի լինի, ուստի նրա «Առաջին Հայքը» պիտի նշանակի «Նախնական Հայաստան» և ոչ մի առնչություն չի կարող ունենալ Դ դարի վերջերից հայտնի «Առաջին Հայք» (Armenia Prima) հռոմեական (ապա բյուզանդական) պրովինցիայի հետ, չնայած որ հարևան էր նրան (տե՛ս Ս. Տ. Ե ր ե մ յ ա ն, Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը, ՊԲՀ, 1970, № 2, էջ 40)։ Նշանակալից է, որ Առաջին Հայքը S չունի և այն տալիս ենք անկյունավոր փակագծերում։ Առհասարակ Աշխ. տարբեր խմբագրություններում Ա և Բ Հայքի խնդիրը մեծ շփոթություններ է առաջացրել, սակայն համեմատաբար հեշտությամբ է վերականգնվում ճիշտ ընթերցումը։ Ըստ P.\՝ «Ի. Առաջին Հայք, յելից կալով Առաջին Կապադովկիոյ առ երի Երկրորդ Հայոց և սահմանի յելից Եփրատայ, և լեառն ունի զԱոգէոս, և գետս երեսուն՝ զԱլիս և այլ մանունս»։ Տվյալ բնագրում ճիշտ տրված է 387—536 թթ. Առաջին Հայքի տերիտորիան, միայն Խորենացու ազդեցության ներքո մտցված է Արգէոս լեռը, որ գտնվում էր Առաջին Կապադովկիայում։

Ըստ եկեղեցական բաժանման, համաձայն Դոքս.՝ «Տասն և Ա՝ Սեբաստիա յԵրկրորդ Հայք ունի եպիսկոպոսս Դ» ια' ἡ Σεβάστεια τῆς δευτέρας Ἀρμενίας, ἔχουσα ἐπισκόπας ζ, էջ 30)։ Ինչպես տեսնում ենք՝ Առաջին Հայքը արդեն կոչվում է Երկրորդ Հայք, ըստ խս ըստ հուստինիանոսյան բաժանման է, ինչպես և ըստ Bas; Not. Ἐπαρχία Ἀρμενίας Β ἡ Σεβαστείας. ըստ Nova Tact՝. Τῇ Σεβαστεία τῆς Ἀρμενίας և ունեն չորս թեմ. α'. ὁ Σεβαστουπόλεως, β' ὁ Νικοπόλεως, γ' ὁ Σατάλων, δ' ὁ Βερίσσης։ Bas. Not. ունի նաև՝ ὁ Κολωνείας. որ հինգերորդ թեմն է (G e o r g C y p r., էջ 13, 66)։

Գ III Ա իա. 1 Ինչպես նշեցինք, որպեսզի հնարավորություն ունենա ցույց տալու ամբողջական Մեծ Հայքը, Աշխ. հեղինակը Փոքր Հայքը բերում է ըստ 387—536 թթ. վարչական բաժանման՝ Ա և Բ Հայք, նշելով, որ նրա ժամանակ նրանք արդեն կոչվում էին՝ Բ և Գ Հայք, իսկ հուստինիանոսյան Առաջին Հայքը, որն ընդգրկում էր Մեծ Հայքի նահանգներից մեկը՝ Բարձր Հայքը և մերձսևծովյան Կապադովկիան, Պոնտոսը և Պողեմոնական Պոնտոսը, ներառ-

տոսի, առ ի ծովուն ցՄոսքական լերունս[2], որ բաժանեն ընդ նա և ընդ Մեծ Հայս։ Ունի լերինս երեք[3] և գետս չորս[4]։

Ահա կատարեցան Միջերկրեայք կոչեցեալք[5]։

յալ Առաջին Հայքի հյուսիսային մասերը, չի բերվում։ Աշխ. հեղինակը գերադասում է բերել նշված երկրամասերը նախկին բաժանմամբ՝ Ա Հայք, Պոնտոս Պողեմոնական և Պոնտոս Կապադովկիոյ, հետևելով Պտղոմեոսին և սրանով վերջացնելով «Միջերկրեայք» (Asiae tabula prima) քարտեզի նկարագրությունը։

Աշխ. Պոնտոս Կապադովկիոյ-ն համապատասխանում է Պտղոմեոսի (V, 6, 5) Πόντος Καπαδοκικός-ին։

2 Μοσχικὰ ὄρη. այսպես էր կոչվում Պարխարյան լեռների հյուսիսային շարունակությունը կազմող այժմյան Աճարա-Մեսխական լեռնաշղթան, որը մինչև մ. թ. 37 թ. բաժանում էր Մեծ Հայքի մեջ մտնող Κοταρζηνὴ (Գոդերձական) երկիրը Կողքիսից (V, 12, 4) և այս մտքով էլ ասված է Աշխ.՝ «ցՄոսքական լերունս, որ բաժանեն ընդ նա և ընդ Մեծ Հայս»։

3 Նկատի ունի՝ Μοσχικὰ ὄρη (V, 6, 1,) Σκοιδίσσος ὄρος (V, 6, 7), Ստրարոնի (XI, 2, 15), Σκυλίστης ὄρος և ὁ Παρυάδρης ὄρος (V, 12, 2):

4 Նկատի ունի՝ Ἀργαῖος. Κισσα. Ἄψορρος և երկու վտակներից բաղկացած (Γλαῦκος, Λύκος) գետը (V, 6, 6):

5 Եկեղեցական բաժանման տեսակետից Հիերոկլեսը ունի՝ «Տրապիզոն Լազիկիայ ունի եպիսկոպոսս Ի» (ἡ Τραπεζοῦς τῆς Λαζικῆς. ἔχουσα ἐπισκόπας ι') էջ 31, տես. Georg. Cypr., էջ 77—78)։

(Շարունակելի)